**ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԳՀԱՊՁԲ-21-7/49-3**

ք. Երևան «24». 09. 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ ,Գնորդ, մի կողմից, և «Ռիմնա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ռ. Նազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ ,Վաճառող մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.amկայքի «Գրադարանե բաժնի »ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԵ ենթաբաժնում):

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1254750 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անքաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ռիմնա» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Չարենց թաղ. 2 15, բ46 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | "ԱԿԲԱ ԲԱՆԿ" ԲԲԸ, Զեյթուն մ/ճ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 220300126772000 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01022893 |
| ՀՀ ՊՆ ՆՏՍ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈՒՂՅԱՆ | Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**7. Ուսադիր՝ գեներալ-մայորի ՌՈ /գրասենյակային/ /զույգ/:** Ուսադիրը ուղղանկյուն-նաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի ստորին եզրից 45 մմ հեռավորության վրա՝ ուսադիրի կենտրոնում մշակված է 5%-ոցոսկյականիտելով գործված 22 մմ տրամագծով աստղ: Ուսադիրի հակադարձկողմըպետքէպատվածլինի սև գույնի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրիհակադարձկողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմհեռավորության վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթիցկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը: Ուսադիրներիերկարությունը՝ 13.5 սմ, իսկլայնությունը՝ 5.0 սմ: Ուսադիրի զարդանախշը **հավելված 1 նկար 8-ին** համարժեք:

Փաթեթավորումըարկղով, քանակըարկղում՝ 3 զույգ: Արկղըպիտակավորված, պիտակիվրապետքէնշվածլինիտեսականուանվանումը, քանակը, մատակարար և արտադրողկազմակերպությանանվանումը, արտադրմանտարեթիվը: Բոլորչափսերիթույլատրելիշեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1-ի:

**8. Ուսադիր՝ գնդապետի ՌՈ /զույգ/:**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարծաթատական թելերով գործված 20 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25 մմ հեռավորության վրա՝ գործվում են երկու իրար զուգահեռ աստղեր, որոնցից ևս 25 մմ հեռավորության վրա՝ ուսադիրի կենրոնում գործվում է ևս 1 հատ 20 մմ տրամագծով աստղ:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև 120 զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպ-ության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**9. Ուսադիր՝ փոխգնդապետի ՌՈ /զույգ/:**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարհեստական թելերով գործված 20 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25 մմ հեռավորության վրա՝ գործվում են երկու իրար զուգահեռ աստղեր:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև 105զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպ-ության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**10. Ուսադիր՝ մայորի ՌՈ /զույգ/:**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարհեստական թելերով գործված 20 մմ տրամագծով աստղ: Ուսադիրի ստորին եզրից 45 մմ հեռավորության վրա՝ ուսադիրի կենտրոնում գործվում է մեկ աստղ:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև 105 զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**11. Ուսադիր՝ կապիտանի ՌՈ /զույգ/:**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարհեստական թելերով գործված 13 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25 մմ հեռավորության վրա՝ գործվում են երկու իրար զուգահեռ աստղեր, իսկ ուսադիրի կենտրոնական հատվածում գործվում են իրար ուղղահայաց ևս երկու 13 մմ տրամագծով

աստղեր՝ իրար զուգահեռ գործված աստղերի կենտրոնից 25-ական մմ հեռավորության վրա:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև 60 զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպ-ության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**<u>12. Ուսադիր՝ ավագ լեյտենանտի ՌՈ /զույգ/:</u>**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարիեստական թելերով գործված 13 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25 մմ հեռավորության վրա՝ գործվում են երկու իրար զուգահեռ աստղեր, իսկ ուսադիրի կենտրոնական հատվածում գործվում է ևս մեկ 13 մմ տրամագծով աստղ՝ իրար զուգահեռ գործված աստղերի կենտրոնից 25 մմ հեռավորության վրա:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ: Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև 30 զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**<u>13. Ուսադիր՝ լեյտենանտի ՌՈ /զույգ/:</u>**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարիեստական թելերով գործված 13 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25 մմ հեռավորության վրա՝ գործվում են երկու իրար զուգահեռ աստղեր:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև45զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպ-ության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**<u>14. Ուսադիր՝ ավագ ենթասպայի ՌՈ /զույգ/:</u>**Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ

տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարիեստական թելերով գործված 13 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25-ականմմ հեռավորության վրա՝ ուղղահայացկարգով, երեքշարքովգործվումենմեկական 13 մմտրամագծով երեք աստղեր:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև30զույգ: Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

<u>**15. Ուսադիր՝ ենթասպայի ՌՈ /զույգ/:**</u>Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից: Ուսադիրի վրամոխրագույնարիեստական թելերով գործված 13 մմ տրամագծով աստղերով: Ուսադիրի ստորին եզրից 25-ականմմ հեռավորության վրա՝ ուղղահայացկարգով, երկուշարքովգործվումենմեկական 13 մմտրամագծով երկու աստղեր:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև60զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպ-ության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

<u>**16. Ուսադիր՝ շարքայինի ՌՈ /զույգ/:**</u>Ուսադիրի դաշտի զարդանախշը **հավելված 1 նկար 9-ին** համարժեք:Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ:Թեք կտրվածքներով լայնակի կողմում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանումէպոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացմանլեզվակը, որիվերջնամասում՝ եզրից 8.0 մմդեպիներս,ուսադիրիամրացմանհամար մշակվում է 5.0 մմտրամագծովանցք: Ամրացմանլեզվակիլայնությունը 2.5 սմ:Ուսադիրիներքինեզրիցդեպիներս՝ 3.5 սմհեռավորության՝վրաուսադիրիլայնությամբմշակվածէ 2.0 սմլայնքովկամրջակ, որիմիջովանցնումէուսադիրիամրացմանլեզվակը:Ուսադիրի արտաքին մասը մշակված է սևգույնի պոլիամիդե գործվածքից:Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով, արկղում մինչև45զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

**17. <u>Կրծքանշան /գրասենյակային/ ՌՈ/հատ/:</u>**Արտադրվում է սև գույնի «Ռիպստոպ»տեսակի,ոչպակասքան 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից, դարձերեսին ծզող ջրակայուն կտորաշերտով՝ 13 x 3.0 սմ չափսերի կարմիր արհեստական թելից գործված ուղանկյունաձև շրջանակի տեսքով, եզրերը լցակարված: Շրջանակի ներսում՝ձախից-աջ, մոխրագույն արհեստական թելով, մեծատառերովգործվում է «ՊՆ ՌՈ»: Տառի բարձրությունը՝ 15 մմ, լայնությունը՝ 7.0 մմ, իսկ տառի պատի լայնությունը՝ 3.0 մմ: Թույլատրելի շեղումը մինչև 3%:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով՝ արկղի մեջ մինչև 150հատ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Արտաքին տեսքը **հավելված 1 նկար 10-ին**համարժեք:

**18. <u>Կրծքանշանարյանկարգի /գրասենյակային/ ՌՈ /հատ/:</u>**Արտադրվում է սև գույնի «Ռիպստոպ»տեսակի,ոչպակասքան 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից, դարձերեսին ծզող ջրակայուն կտորաշերտով՝ 13 x 3.0 սմ չափսերի կարմիր արհեստական թելից գործված ուղանկյունաձև շրջանակի տեսքով, եզրերը լցակարված:Շրջանակի ներսում՝ձախից-աջ, մոխրագույն արհեստական թելով, մեծատառերովգործվում է **արյանկարգինշումները**: Տառի բարձրությունը՝ 15 մմ, լայնությունը՝ 7.0 մմ, իսկ տառի պատի լայնությունը՝ 3.0 մմ: Թույլատրելի շեղումը մինչև 3%:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով՝ արկղի մեջ մինչև 150հատ:Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Արտաքին տեսքը **հավելված 1 նկար 11-ին**համարժեք:

| O(I)Rh+ | O(I)Rh- | A(II)Rh+ | A(II)Rh- | B(III)Rh+ | B(III)Rh- | AB(IV)Rh+ | AB(IV)Rh- |
|---|---|---|---|---|---|---|---|
| 24.2% | 3.94% | 45.03% | 5.07% | 11.81% | 1.8% | 7.42% | 0.73% |

**19. <u>Թևքանշան ՌՈ /գրասենյակային/ /հատ/:</u>**Արտադրվում է սև գույնի «Ռիպստոպ»տեսակի,ոչպակասքան 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից, դարձերեսին ծզող ջրակայուն կտորաշերտով:Արտաքին չափսերը՝ 8.0սմ x 10.5 սմ չափսերի արհեստական կարմիր գույնի ասեղնագործված շրջանակ՝ վերնամասը կլորավուն, իսկ ստորինհատվածը՝ սեպաձև, եզրերը լցակարված: Թևքանշանի վրա՝վերնամասումմոխրագույն թելով գործված է «ՀԱՅԱՍՏԱՆ», շրջանակի մեջտեղում՝ զինված ուժերի զինանշանը, զինանշանի տակ՝ «ԶԻՆՎԱԾՈՒԺԵՐ»: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով՝ արկղի մեջ մինչև 150հատ:Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Արտաքին տեսքը **հավելված 1 նկար 12-ին**համարժեք:

**20. Թևքանշան ՌՌ/հատ/:**Արտադրվում է սև գույնի «Ռիպստոպ»տեսակի,ոչպակասքան 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից, դարձերեսին ծգող ջրակայուն կտորաշերտով:Արտաքին չափերը՝ 8.0 սմ տրամագծով արհեստական կարմիր գույնիգործված շրջանակ, եզրերը՝ լցակարված: Թևքանշանիվրապատկերվումէռազմական ոստիկանության զինանշանը, վահանը:Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղով՝ արկղի մեջ մինչև 150հատ:Արկղը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Արտաքին տեսքը **հավելված 1 նկար 13-ին**համարժեք:

**Ծանոթություն. (7-20 չափաբաժինների համար)**

1.Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1 Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2 Նմուշիհետհամատեղ՝ մատակարարկազմակերպությունըպարտավորէներկայացնելարտադրմանհամարօգտագործվածբոլորնյութերն՝ ամրացվածգծագրականթղթիվրա: Ներկայացվածնմուշնստորագրումէմատակարարն, համաձայնեցվումէՀՀԶՈՒԹԳՎիրայինծառայությանպետի հետևհաստատվումկամմերժվումէՀՀԶՈՒթիկունքիպետ-վարչությանպետիկողմից, ներկայացնելուցոչուշքաներեքաշխատանքայինօրվաընթացքում:

2. Մատակարարվողապրանքատեսականինպետքէլինինորևչօգտագործված:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒՀՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ռիմնա» ՍՊԸ
տնօրեն

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հավելված



(Նկար 8)



(Նկար 9)




(Նկար 10)




(Նկար 11)




(Նկար 12)




(Նկար 13)

«ՌԻՄՆԱ»
«РИМНА»
«RIMNA»

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ 4-րդ եռամսյակ, մինչև 30.11.2021թ. |
| 7 | **ուսադիր** (Ուսադիր գեներալ-մայորի ՌՈ /գրասենյակային/) | զույգ | 3 | 12000 | 36000 | 3 |
| 8 | **ուսադիր** (Ուսադիր գնդապետի ՌՈ) | զույգ | 120 | 1800 | 216000 | 120 |
| 9 | **ուսադիր** (Ուսադիր փոխգնդապետի ՌՈ) | զույգ | 105 | 1750 | 183750 | 105 |
| 10 | **ուսադիր** (Ուսադիր մայորի ՌՈ) | զույգ | 105 | 1700 | 178500 | 105 |
| 11 | **ուսադիր** (Ուսադիր կապիտանի ՌՈ) | զույգ | 60 | 1750 | 105000 | 60 |
| 12 | **ուսադիր** (Ուսադիր ավագ լեյտենանտի ՌՈ) | զույգ | 30 | 1650 | 49500 | 30 |
| 13 | **ուսադիր** (Ուսադիր լեյտենանտի ՌՈ) | զույգ | 45 | 1600 | 72000 | 45 |
| 14 | **ուսադիր** (Ուսադիր ավագ ենթասպայի ՌՈ) | զույգ | 30 | 1650 | 49500 | 30 |
| 15 | **ուսադիր** (Ուսադիր ենթասպայի ՌՈ) | զույգ | 60 | 1600 | 96000 | 60 |
| 16 | **ուսադիր** (Ուսադիր շարքայինի ՌՈ) | զույգ | 45 | 1500 | 67500 | 45 |
| 17 | **տարբերանշաններ** (Կրծքանշան գրասենյակային ՌՈ) | հատ | 150 | 270 | 40500 | 150 |
| 18 | **տարբերանշաններ** (Կրծքանշան արյան կարգի գրասենյակային ՌՈ) | հատ | 150 | 270 | 40500 | 150 |
| 19 | **թևքանշան և այլ պարագաներ** (Թևքանշան ՌՈ /գրասենյակային/) | հատ | 150 | 400 | 60000 | 150 |
| 20 | **թևքանշան և այլ պարագաներ** (Թևքանշան ՌՈ) | հատ | 150 | 400 | 60000 | 150 |

**Ծանոթություն՝ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՑՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ռիմնա» ՍՊԸ
տնօրեն

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

«ՌԻՄՆԱ» «РИМНА» «RIMNA» 01012393

Հավելված N
N ԳՀԱՊՁԲ-21-7/49-3 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝ |
|---|---|---|---|
| | | | 4-րդեռամսյակ |
| 7 | **ուսադիր** (Ուսադիր գեներալ-մայորի ՌՈ /գրասենյակային/) | 35811190/76 | 36000 |
| 8 | **ուսադիր** (Ուսադիր գնդապետի ՌՈ) | 35811190/56 | 216000 |
| 9 | **ուսադիր** (Ուսադիր փոխգնդապետի ՌՈ) | 35811190/57 | 183750 |
| 10 | **ուսադիր** (Ուսադիր մայորի ՌՈ) | 35811190/58 | 178500 |
| 11 | **ուսադիր** (Ուսադիր կապիտանի ՌՈ) | 35811190/59 | 105000 |
| 12 | **ուսադիր** (Ուսադիր ավագ լեյտենանտի ՌՈ) | 35811190/60 | 49500 |
| 13 | **ուսադիր** (Ուսադիր լեյտենանտի ՌՈ) | 35811190/61 | 72000 |
| 14 | **ուսադիր** (Ուսադիր ավագ ենթասպայի ՌՈ) | 35811190/62 | 49500 |
| 15 | **ուսադիր** (Ուսադիր ենթասպայի ՌՈ) | 35811190/63 | 96000 |
| 16 | **ուսադիր** (Ուսադիր շարքայինի ՌՈ) | 35811190/64 | 67500 |
| 17 | **տարբերանշաններ** (Կրծքանշան գրասենյակային ՌՈ) | 39561133/22 | 40500 |
| 18 | **տարբերանշաններ** (Կրծքանշան արյան կարգի գրասենյակային ՌՈ) | 39561133/21 | 40500 |
| 19 | **թևքանշան և այլ պարագաներ** (Թևքանշան ՌՈ /գրասենյակային/) | 35811240/22 | 60000 |
| 20 | **թևքանշան և այլ պարագաներ** (Թևքանշան ՌՈ) | 35811240/21 | 60000 |

* Վճարմանենթակագումարներըներկայացվածենաճողականկարգով

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ԹՈՒԼՋՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ռիմնա» ՍՊԸ
տնօրեն

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

**Հավելված N 3**
**N ԳՀԱՊՁԲ-21-7/49-3 պայմանագրի**

| Պայմանագրիկողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելուվայրը ____________ | գտնվելուվայրը ____________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « »20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ __________
ՊատվիրատուևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**N ԳՀԱՊՁԲ-21-7/49-3 պայմանագրի**

ԱԿՏ N______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ __________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. __________________ -ին կնքված N___________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն